

Proposed Project Briefs/Առաջարկվող նախագծի համառոտագիր

	Project Name/ Նախագծի անվանումը	Brief Description/ Համառոտ նկարագրությունը	Timeline and Priority/ Ժամանակացույցը և առաջնահերթությունը	Materials, Costs (if known)/ Նյութեր, արժեքը (եթե հայտնի է)
1.	<p>Փառքի պուրակի բարեկարգում</p> <p>Improvement of the Park of Glory</p>	<p>Բնակավայրի կենտրոնում, 200 քմ տարածքի վրա, գտնվում է Փառքի պուրակը, որտեղ տեղադրված են Հայրենական Մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանը, Մեծ Եղեռնի 100-ամյակին նվիրված հուշարձան-խաչքարը, Արցախի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածներին նվիրված հուշարձանը և Հին գյուղի՝ 1953 թ-ին կառուցված ու 2015թ-ին ներկայիս գյուղատեղ տեղափոխված և վերականգնված հուշարձան-աղբյուրը: Անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել ցանկապատը, կանաչապատել և բարեկարգել տարածքը: Ունենալով բարեկարգ պուրակ հնարավորություն կընձեռնվի ազգաբնակչությանը, ինչպես նաև զբոսաշրջիկներին, իրենց հանգիստը անցկացնել պուրակի տարածքում: Փառքի պուրակի բարեկարգումը մեծ նշանակություն ունի ազգաբնակչության հայրենասիրական ոգին բարձր պահելու, երիտասարդությանն իր պատմությանը մշտապես հաղորդակցվելու առումներով:</p> <p>There is a Park of Glory (200 m2) in the centre of the village. There is a Monument dedicated to the Victims of the Great Patriotic War, a cross-stone monument dedicated to the 100 Memorial of Armenian Genocide, a Monument dedicated to those who sacrificed their lives protecting the borders of Artsakh and Armenia, and the old village's monument-fountain, built in 1953 and moved to the current village in 2015. It is necessary to completely repair the fence, landscape and improve the site. A well-maintained park will give an opportunity to villagers and also to the tourists have a restful time there. The improvement of the park has an important role for maintaining the high patriotic spirit of the people and helping youth to be in touch with their history.</p>	<p>2 ամիս</p> <p>2 month</p>	<p>1,200 000 դրամ</p> <p>1,200 000 dram (2,450USD)</p>

2.	<p>Եղեգնալճի տարածքի բարեկարգում</p> <p>The improvement of the territory next to Yeghegnaliche</p>	<p>Համայնքի վարչական տարածքում 1450 մ ծովի մակերևույթից բարձրության վրա գտնվում է գեղատեսիլ Եղեգնալիճը՝ 1,8 հա հայլու մակերեսով: Եղեգնալճի ափին տեղադրելով մեկ զրուցարան/տաղավար/և ապահովելով խմելու ջրով՝ կունենանք բարեկարգ տարածք, որտեղ ցանկացողները կարող են անցկացնել իրենց հանգիստը՝ զբաղվելով ձկնորսությամբ, լողով ևն:</p> <p>In the administrative area of the community at 1,450 m above sea level is located the picturesque Yeghegnaliche lake (an area of 1.8 hectares). Placing a pavilion on the lake shore and providing drinking water will allow it to become a restful place for tourists and for people to spend their weekends/holidays doing fishing, swimming and etc.</p>	<p>15 օր</p> <p>15 days</p>	<p>450,000 դրամ</p> <p>915 USD</p>
3.	<p>Դպրոցի և երիտասարդների համար մարզագույքի ձեռք բերում</p> <p>Purchase of sport equipment for school and youth</p>	<p>Բյուջեի սղության պատճառով հնարավոր չի լինում դպրոցն ապահովել պատշաճ մարզագույքով: Շաբաթվա մեջ առնվազն երկու անգամ դպրոցի մարզադահլիճում երիտասարդները կազմակերպում և անց են կացնում ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի և թենիսի մարզումներ և մրցություններ:</p> <p>Մարզագույքով պահովումը կաջակցի երիտասարդների զարգացմանը, և հնարավորության դեպքում, այցելու զբոսաշրջիկներին և ամբողջ գյուղին (օրինակ՝ համայնքային ռեսուրս):</p> <p>Due to budget shortages, it is not possible to provide the school with proper sport equipment. At least twice a week the village youth organize and conduct trainings and competitions of football, volleyball, tennis and basketball in the school gym. Providing sports equipment and facilities will support youth development and if possible, visiting tourists and the village as a whole (i.e.: a community resource).</p>	<p>7 օր</p> <p>7 days</p>	<p>Գնդակներ՝ 1 վոլեյբոլի՝ 50,000 դր. 2 ֆուտբոլի՝ 50,000դր. 3 բասկետբոլի՝ 50,000դր. Թենիսի դաշտ՝ 80,000 դր. Ընդամենը՝ 230,000 դր.</p> <p>Balls 1 volleyball 102 USD 2 football 102 USD 3 basketball 102 USD Tennis court 162 USD Total 468 USD</p>

4.	<p>Աղբամանների ձեռք բերում</p> <p>Purchase of garbage bins</p>	<p>Գյուղը մաքուր պահելու, առողջությունն ու անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտություն կա փողոցներում տեղադրել աղբամաններ՝ դյուրացնելով գյուղապետարանի կողմից կատարվող աղբահանությունը:</p> <p>There is a need to install street rubbish bins to augment the established community rubbish collection, for health and safety, and to help keep the village clean.</p>	<p>2 շաբաթ</p> <p>2 weeks</p>	<p>250,000 դրամ</p> <p>510 USD</p>
5.	<p>Ձայնային տեխնիկայի ձեռք բերում (կոմպլեկտ, ուժեղացուցիչ, կառավարման վահանակ, բարձրախոս)</p> <p>Purchase of Sound equipment (Set, amplifier, control panel, microphone)</p>	<p>Մշակույթի տանը գործում են ազգագրական պարի և երգի խմբեր, ուր հաճախում են 80-ից ավել երեխաներ և երիտասարդներ: Յուրաքանչյուր տարի գյուղապետարանը համագործակցելով բարերարների հետ ձեռք է բերում ազգային տարազներ, մասիկներ՝ ապահովելով անապահով երեխաներին անհրաժեշտ պարի հագուստով: Խմբերը տոն օրերին ներկայանում են համերգներով թե՛ համայնքում, թե՛ համայնքի սահամաններից դուրս, մասնակցում են հանրապետական մրցույթներին և փառատոններին: 2015թ-ին ազգագրական պարի խումբը ստացել է հրավերք մասնակցելու 2016թ-ին Հունաստանում կայանալիք պարերի փառատոնին:</p> <p>Համայնքի բյուջեի սղության պատճառով չենք կարողանում ձեռք բերել ձայնային տեխնիկա, որով կկարողանանք պատշաճ ձևով ներկայանալ հանդիսատեսին: Այդ պատճառով բազմաթիվ միջոցառումներ (ներառյալ զբոսաշրջիկների համար կամ հատուկ միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները) կյանքի չեն կոչվում: Ներկա պահին անհրաժեշտության դեպքում ձայնային տեխնիկան վերցնում ենք վարձակալությամբ: Այսպիսով սա կլինայի գյուղի միջոցները այլ պահանջարկների համար:</p> <p>There are singing and dancing groups in the village House of Culture, which are attended by more than 80 children and young people. Each year the municipality in cooperation with donors purchases national costumes, dance shoes and dance clothes to children from poor families. The groups have concerts both inside community and outside, participating republic</p>	<p>1 շաբաթ</p> <p>1 week</p>	<p>1, 100 000 դրամ</p> <p>2,240 USD</p>

		<p>competitions and festivals. In 2015 the group for national dance was invited to take part in Dance festival in Greece in 2016.</p> <p>Due to budget shortages of community we are not able to purchase sound equipment, which will allow the groups to perform in front of audience in proper manner so many opportunities (including the possibility of performing for tourists or at special events) are not realised. At the moment we hire the sound equipment when needed, so this will save the village resources for other requirements.</p>		
6.	Նստարանների ձեռք բերում	Ազգաբնակչության հանգստի և զբոսաշրջության գրավչության նպատակով մարդաշատ վայրերում, Փառքի պուրակում, կանգառներում անհրաժեշտ է տեղադրել նստարաններ:	1 ամիս	320, 000 դրամ
	Purchase of benches	For tourism and leisure there is a need to install benches in crowded areas, in the Park of Glory and bus stations.	1 month	650 USD
7.	Մանկապարտեզի խաղահրապարակի կահավորում	Մանկապարտեզը չունի ժամանակակից հրապարակ: Այն հաճախող 40-ից ավելի երեխաներ օգտվում են դեռևս 1980- ական թվականներից մնացած մարզական աստիճաններից: Տեղադրելով մանկական ճոճանակներ, սահարաններ կունենանք բարեկարգ մանկական խաղահրապարակ, որտեղ բացի մանկապարտեզի սաներից կարող են խաղալ նաև մանկահասակ երեխաները:	1,5 ամիս	600,000 դրամ
	Equipment for Kindergarten Playground	The village kindergarden doesn't have a modern playground area. More than 40 children attending the kindergarden use the sport ladders which were built in the 1980s. Installation of new swings and slides will improve the playground, where all village children can play.	1,5 month	1,220 USD
8.	Համայնքի տեսարժան վայրերը պատկերող և լուսաբանող ցուցանակների տեղադրում	Ռինդ համայնքի տարածքը բավականին հարուստ է տեսարժան վայրերով: Այստեղ կան դեռևս 12-13-դդ. խաչքարեր, մատուռներ, քարանձավներ, դամբարանադաշտեր և այլն: Վերջին տարիներին մեր համայնքը սկսել է հետաքրքրել զբոսաշրջիկներին: Այն ավելի դյուրին դարձնելու համար անհրաժեշտ է մի քանի վայրերում տեղադրել համայնքի տեսարժան վայրերը պատկերող և լուսաբանող ցուցանակներ:	2 ամիս	350,000 դրամ

	Signage installation for Community attractions	Rind community area is rich in tourist attractions. There are the 12-13th centuries stone crosses, chapels, caves, graveyards etc. In recent years, our community has been of interest to tourists so signs will make it easier to reach several attractions, especially if they are depicted as a circuit.	2 month	715 USD
9.	Գիշերային լույսերի վրա կարգավորիչների տեղադրում	Համայնքը ոչ ամբողջությամբ ապահովված է գիշերային լուսավորվածությամբ: Լուսավորումն ավելի ռացիոնալ և արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է գիշերային լույսերի վրա տեղադրել կարգավորիչներ, որը հնարավորություն կտա մթնոլորտի դեպքում ինքնուրույն միանալու և լույսի դեպքում անջատվելու:	1 ամիս	280,000 դրամ
	Installation of regulators on night lights	The community is not fully covered with night lighting. For more rational and efficient use of lighting there is a need for placing/installing regulators on night lights which will allow the lights to independently turn on in the evening and turn off in the morning.	1 month	570 USD
10.	Չրանցի ձեռք բերում	Համայնքը հայտնի է իր համեղ և էկոլոգիապես մաքուր մրգերով: Տարեկան արտադրվում է մինչև 1,200 տ. դեղձ, 500 տ. ծիրան և այլ մրգեր, որոնց սպառումը հաճախակի դառնում է խնդիր: Եթե բարձր որակի մրգերը վերածվեն չրերի, խնդիրը կլուծվի, քանի որ չրերը լայն պահանջարկ ունեն և սպառելու խնդիր չի լինի: Առաջարկվում է նախնական ձեռք բերել 300կգ /30 ժամ արտադրողականությամբ չրանոց, որից կօգտվի ողջ համայնքը: Ապագայում գյուղը հետաքրքրված է այլ շուկաներ հնարավոր արտահանմամբ:	10 օր	3,000 000 դրամ
	Purchase of fruit dryer	The community is known for its delicious and organic fruits. Annual production is up to 1,200 tons of peach and 500 tons of apricots and other fruits, but consumption frequently becomes a problem. If the high quality fruit is dried, the problem will be solved and the consumption of fruit and produce that exhaustion is not a problem. It is proposed to initially purchase a 300 kg / 30 hour capacity drier, which will be used by whole community. In the future the village is interested in possible export markets.	10 days	6,102 USD
11.	Մշակաբույսերի բազմազանեցում	Գյուղի միջավայրի ուսումնասիրում գնահատելու, թե արդյոք կարելի է աճեցնել այլ մշակաբույսեր, օրինակ, բարձր արժեքային խոտաբույսեր, բանջարեղեն և ծաղիկներ: Սա կապահովի անվտանգ տնտեսական բազա՝ փոխարեն հենվելու մրգերի վրա և նաև կապահովի աշխատանքով տարվա այն ժամանակահատվածում, երբ մրգերը խնամք չեն պահանջում:	6 ամիս	Հնարավոր է գրոյական արժեք, եթե սփյուռքահայ մասնագետները խորհուրդներ տան սկայայի միջոցով

	Diversification of crops	Study of the village environment to assess whether other crops can be considered, such as high value herbs, vegetables and flowers. This will provide a safer economic base instead of relying on fruit and also provide work at times of the year when fruit may not require tending.	6 months	Possible nil cost if Armenian diaspora experts can be located to Skype advice to villagers
12.	SS սարքավորումներ IT equipment	Մեկ կամ երկու համակարգիչների, լեզվի ծրագրերի ձեռքբերում գյուղացիներին օտար լեզուներ սովորեցնելու համար, ինչպես անգլերենը, զբոսաշրջությունը բարձրացնելու և երիտասարդներին աշխատատեղեր ապահովելու նպատակով: Purchase of one or two computers and language programmes for teaching villagers foreign languages, such as English to enhance tourism and provide job skills for youth.		Մոտ 2,000 ԱՄՆ դոլար Approx. 2000 USD